ՆՈՐ-ԴԱՐ

№ 44 ՏԱՍՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ Երեքշաբթի, 13 Մարտի **1901** Երեքշաբթի 13 Մարտի ՏԱՍՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 44

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր.50 կ., ամիսը՝ 1 ր., հատով 5 կ.: Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը:

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ" կամ Tiflis, Rédaction ,,Nor-Dar''

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը: Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով: Յայտարարութիւնների բառին 2 կ.,ռէկլամների համար կրկնապատիկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Անմեղ խորհրդածութիւններ:
Քրոնիկոն.—Լուրեր:
Մեզ գրում են.—Սղնախից: Լազգաղից: Թաւրիզից:
Թղթակցութիւններ.—Նամակ Ֆրանսիայից, Պարիզ: Նամակ Պարսկաստանից, Մարաղա:
Քաղաքական.—Մակեդոնիա: Չինաստան:
Հեռագրական լուրեր:
Բանասիրական.—Կինը:
Տեղեկատու:
Յայտարարութիւններ:

Թիֆլիս, 12 մարտի 1901 թ.

ԱՆՄԵՂ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Ժամանակները փոխւում են, և շարժումն անընդհատ կատարւում է օրգանական ու ոչ-օրգանական աշխարհում: Ժողովուրդն առաջ է ընթանում, զարգանում է, և այսօր նոր հոսանքը նոր մարդիկ է առաջ բերում, մեծացող սերունդի առաջ նոր ճանապարհներ բանում:

Նոր սերունդի մտաւոր կեանքին նշանակութիւն տուող, գրականութեամբ հետաքրքրւող և գրականութեան հետևողների մէջ մենք կըտեսնենք մտքի հասկացողութեան և դատողութեան մէջ իրար ներհակ, իրար մերժող հոսանք:

Այսօր դպրոցի տղաների մէջ էլ կըտեսնէք ո՛չ մի հեղինակութիւն չընդունելու ձգտումն, կըտեսնէք՝ որ փոքրը մեծին, աշակերտն իւր ուսուցչին յարգելուց հրաժարւում է, որովհետև դա հին բան է, հնութիւնից մնացած աւանդութիւն:

Իսկ այն ամենը, ինչ որ աւանդական է,— չի կարող ընդունել յառաջադէմ մարդը: Այն ամենը, ինչ որ աւանդական է, թէկուզ ամենախելօք միտքը,—խորշելի է, որովհետև նոր մարդն ուզում է նոր մնալ. Նրա համար ամենափառաւոր յիմարութիւնն էլ ընդունելի է, բաւական է,որ նոր լինի:

Եւ այդ հոսանքն այնքան զօրեղ է, որ տասը տարին մի անգամ մի բան գրողն էլ—թէկուզ դրա յօրինածը լրագրական յօդուածների ընթերցման արդիւնք լինի — դարձեալ աւանդական լինելուց «հրաժարիմք» է կարդում, ոչպէս զի նոր հոսանքին կուլ չգնայ:

Չենք ընդունում ո՛չ մի հեղինակութիւն, չենք պատկառում ոչ մի նուիրական հաստատութիւնից.—այս է մեր արդի յառաջադիմութիւնը որոշող հոսանքը:

Այդ այդպէս լինելուց յետոյ՝ պէտք է կարծէինք, որ մեր ժամանակներում դժուար է, ինչ ենք ասում,անհնարին բան է, որ մի որևէ երկարամեայ գործիչ, մի որևէ գրող, եթէ ամենամեծ մարդն էլ լինի, մեծ հանճար էլ լինի,կարողանար նշանաւոր,հաստատ և մնայուն տեղ բռնել մեր հասարակական կեանքում, մեր գրականութեան մէջ, վերջապէս, մեր արդի մտքի հոսանքի մէջ, քանի որ այդ հոսանքը հեղինակութիւն չէ ընդունում և աւանդականից խորշում է:

Բայց ինչ ենք տեսնում:

Մեր մտաւոր կեանքի մէջ կայ և մի ուրիշ, աւելի վայրենի, նախաջրհեղեղեան հոսանք, որ բոլորովին այլ կէտի է հասցնում:

Մենք տեսնում ենք, որ ոչ մի ժամանակ, էն հին, փտած, խաւար ժամանակներում իսկ, այնքան դիւրին չէ եղել անուն և հեղինակութիւն վաստակելը,ինչպէս մեր մտաւոր զարգացման թարմ շրջանում կարելի է մի քիչ խելքով, մի քիչ ուսումով, շնչին շնորհքով, մի երկու տաղանդով, շատ անգամ էլ առանց խելքի, պրտկերեսութեամբ անմիջապէս թէ երևելի գրող, բանաստեղծ դառնալ, թէ երևելի գործիչ ու հրապարակախօս և մինչև անգամ խմբագիր, թէ երևելի հոգևորական, հռետոր, ազգը խնամող հեղինակութիւն:

Այդ դեռ հոսանքի մի ծայրն է. նայեցէք միւս ծայրին: Այնտեղ բազմեցրած են մեր փոքրիկ ազգի մեծ հանգուցեալները, որոնք, իբրև եգիպտական կուռքեր, ներկայացնում են մեր առաջադէմ, թարմ և աւանդականութիւնից խորշող մտքի քարացումը:

Ո՞վ կարող է և իրաւունք ունի քննադատելու Ստեփաննոս Նազարեանին, Նալբանդեանին, Ներսէս պատրիարքին, Ռ. Պատկանեանին, Րաֆֆուն. դրանք համ հանճարներ են, համ մեծ գործիչներ, համ էլ, իբրև մարդ, պաշտելի մարդիկ: Գովել, փառաբանել այդ կուռքերին և դրանց շահագործել կարելի է: Ասել՝ թէ Րաֆֆին Տուրգենև է, Շեքսպիր է, Պատկանեանը՝ Հայնէ, զուգէ և Գէօթէ...այդ կարելի է և ծիծաղելի չէ: Բայց ասել՝ թէ Րաֆֆին տաղանդ է, և ունի գրուածքներ, որոնց վրայից եթէ ջնջես Րաֆֆի անունը, նշանակութիւն տուող չի լինիլ, ասել՝ թէ Պատկանեանն իբրև բանաստեղծ միջակ տաղանդի տէր գրիչ է ու նրա շատ ոտանաւորները հասարակ կուպլետներ են, ասել՝ թէ Պատկանեանն իբրև հրապարակախօս ոչինչ նշանակութիւն չունի և իւր տաղանդը շատ անգամ գործ է դրել իւր կենտոյական աշխատութիւնների վրայ,—նշանակում է համարձակ քայլ անել և մահացու մեղք կատարել:

Բայց կուռքերը քանի գնում՝ աւելանում են:

Երկու հոսանքն էլ զուգընթաց գոյութիւն ունեն մեր մէջ, երկու միմեանց բացասող հոսանքը: Ոչ մի հեղինակութիւն չենք ճանաչում և միևնոյն ժամանակ կուռքեր ստեղծում ու այդ կուռքերով կաշկանդում ենք առողջ միտքը...

Եւ յետոյ:

Յետոյ հետևանքն այն է լինում, որ յառաջադիմութեան անունով մտքի խաւարման ենք հասնում: Սա մի այն տեսակ շարժում է, որ ամենևին ցանկալի չպէտք է լինի նոյն իսկ «ոչ-աւանդապաշտներին և յառաջադէմներին»:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԻՆԸ
(Պարսկական աւանդութիւն)

Ընտանիքը դրախտ շինողն էլ, դժոխք շինողն էլ կինն է:

I

Ամառային մի լուսնկայ գիշեր,երբ ամենքը հանգստանում էին ցերեկուայ յոգնաստանջ աշխատութիւնից յետոյ, Սպահանի նեղ փողոցներից մէկով անցնում էին երկու դերվիշ: Իրենց հագուստով թէև միևնոյն դասի մարդիկ էին երևում, բայց իրօք այդպէս չէր, որովհետև դերվիշներից մէկն իւր ուղեկցի հետ վարւում էր խիստ յարգանքով, ամեն անգամ խօսելիս գլուխ էր տալիս նրան և միշտ մի քայլ ետ էր մնում նրանից,ինչպէս փոքրաւորը մեծաւորից: Այսպէս խօսելով նրանք հասան մի փոքրիկ հրապարակի,որի շուրջը տնկուած ուռենիների մօտից հոսող առուակը իւր գուրեկան խոխոջիւնով լրացնում էր ամառային լուսնկայ գիշերուայ բանաստեղծական գեղեցկութիւնը:

Հէնց որ նրանք մտան հրապարակը, մի շարժուն ստուեր գրաւեց մեծաւոր դերվիշի ուշադրութիւնը: Նա նշանացի կերպով հրամայեց իւր փոքրաւորին կանգնել տեղնուտեղը, իսկ ինքն զգուշութեամբ առաջ գնալով կուչ եկաւ հրապարակի մի անկիւնում, որտեղից, կարելի էր առանց նկատուելու դիտել տեղի ունեցող գործողութիւնը:

Ստուերը, որ գրաւել էր մեծաւոր դերվիշի ուշադրութիւնը, ուժեղ կազմուածքով, սև աչքերով և նորածիլ բեխերով մի գեղեցիկ երիտասարդ էր: Նրա դէմքի ամբողջ գծագրութիւնն արտայայտում էր վճռին ստրճանի լրջութիւն: Նա ուսով յենուել էր առուակի ափում տնկած ուռենիներից մէկին և նայում էր դիմացի կիսաբաց դռան, որի արանքից երևում էր մի կանացի գեղեցիկ գլուխ: Կնոջ սևորակ, խոշոր աչքերը լուսնի լոյսի տակ փայլում էին կրքոտութեամբ,իսկ մի զոյգ թաւ յօնքեր հովանաւորում էին այդ գրաւիչ աչքերը. ուսերի վրայ անհոգաբար թափուած թուխ գիսակներն ու բաց կուրծքը նրան նմանեցնում էին մի գիշերային յաւերժահարսի, որ դուրս էր եկել մարդկային կիրքն ու երևակայութիւնը գրգռելու համար: Բայց զարմանալին այն էր, որ նրա խօսակիցը շատ էլ հրապուրուած չէր նրանով, ընդհակառակը, ինչպէս երևում էր, երիտասարդն էր գեղեցկուհուն հրապուրողը:

—Բաւական է, որչափ տանջեցիր ինձ,—խօսեց գեղեցկուհին ճիշտ այն ժամանակ, երբ դերվիշը տեղաւորւում էր իւր թագստատեղում:—Բաւական է. մինչև երբ պիտի թողնես ինձ այս անորոշ դրութեան մէջ, մինչև երբ պիտի չարչարես ինձ քո նորանոր պահանջներով:

—Մի վերջին պահանջ ես ունեմ քեզ անելու,—ասաց երիտասարդը մռայլ կերպով:

—Ես պատրաստ եմ քո բոլոր պահանջները կատարելու, միայն թէ կարողանամ քեզ իմ գրկում տեսնել,—վրայ բերեց կինը, և նրա աչքերը նորից փայլեցին կրքոտութեամբ:

—Սէրը սարսափելի կերպով կասկածոտ ու խանդոտ է դարձնում մարդու,—ասաց երիտասարդը նոյն մռայլ եղանակով:—Ասա, խնդրեմ, ինչպէս կարող եմ քեզ իմը համարել, երբ դու ուրիշին ես պատկանում: Երբ երևակայում եմ, որ քո օրինաւոր ամուսինն աւելի ընդարձակ իրաւունքների տէր է քո վերաբերմամբ, քան ես. խանդոտութիւնը կրծում է սիրտս ինչպէս մի թունաւոր օձ:

—Եթէ այդչափ անտանելի է քեզ համար իմ ամուսինը,—խօսեց մանկահասակ կինը վճռական կերպով,—ես վաղն և եթ կըբաժանուեմ նրանից:

—Ես միայն դրանով բաւականանալ չեմ կարող, շարունակեց երիտասարդն աւելի ևս մռայլ կերպով:—Եթէ դու ուզում ես, որ հէնց այս գիշեր իմս լինես, պիտի ընդունես իմ վերջին ու վճռական պայմանը, որը քեզնից մի խոշոր զոհողութիւն է պահանջում, և եթէ իմ սէրը նուիրական է քեզ համար, պէտք է որ ուրախութեամբ յանձն առնես այդ:

—Յանձն կառնեմ, այո,—բացականչեց ոգևորուած ջահել կինը.—ես արդէն խոստացայ քեզ ոչ մի զոհողութիւն չխնայել քո սիրոյ համար:

—Այդ զոհը պիտի լինի քո ամուսինը,—ծանր-ծանր ասաց երիտասարդը:—Մինչև որ քո ձեռքերով նրա գլուխը չձգես այս առուակի մէջ, որ բաժանում է երկուսիս, ես երբէք չեմ համաձայնուիլ անցնել այս առուակի վրայից և գրկել քեզ:

Տիրեց մի րոպէ խիստ ծանր լռութիւն: Գեղեցկուհին կանգնած էր շանթահար, յետոյ նա իւր հերարձակ գլուխը յետ ձգեց յանկարծական վճռականութեամբ և արտասանեց.

—Լաւ:

Ու ներս վազեց տունը:

«Ո՞րքան ստոր ու զզուելի հոգի է պարունակում իւր մէջ այդ գեղեցիկ մարմինը», մտածեց դերվիշն ատամները կրճտացնելով: Ու մնաց իւր թագստեան տեղում, շունչը պահած և աչքերը չորս չինած, որ լաւ տեսնի, թէ ինչ պիտի կատարուի: Տան դրան շէմքում կրկին յայտնուեց նոյն գեղեցկուհին հերարձակ և գունաթափ: Դերվիշը նայեց նրան և ակամայ սոսկաց. գեղեցկուհու աջ ձեռքում տեսաւ արիւնոտ մի դանակ, իսկ ձախում մի գեղեցիկ տղամարդու գլուխ, որ դեռ ևս բաց ու խուփ էր անում բերանը, իսկ վզից կաթ-կաթ ծորում էր արիւնը...

Յանկարծ այնպիսի մի կատաղութիւն տիրեց դերվիշին, որ ուզեց դուրս պրծնել իւր թագստատեղից և տեղնուտեղը խեղդել այդ ոճրագործ կնոջը, որի գեղեցկութիւնն այժմ մի դիւային բան էր թւում նրան. բայց զսպեց իրեն և աւելի լաւ համարեց սպասել գործի վախճանին:

—Ահա քո պահանջած զոհը,—գոչեց գեղեցկուհին յաղթանակից դողացող ձայնով և շպրտեց առուակի մէջ իւր ամուսնու արիւնաթաթաւ գլուխը:

Պարզ և վճիտ ջուրը ներկուեց կարմիր արիւնով: Գլուխը ջրի երեսին լող տալով անցաւ երիտասարդի առաջով ատամները բաց և աչքերը չռած: Երիտասարդը նայեց և սոսկումից ակամայ յետ ու յետ գնաց: Երկար ժամանակ սարսափահար աչքերով հետևում էր գլխին, մինչև որ նա կորաւ առուակի հեռաւորութեան մէջ: Իսկ գեղեցկուհին կանգնած էր տան առաջ և ձեռքերը տարածած դէպի իւր ցանկացած երիտասարդը՝ իւր գիրկն էր կանչում նրան տարփանքով:

Երիտասարդը յանկարծ ցնցուեց, մի հրացայտ հայեացք ձգեց գեղեցկուհու վրայ, յետոյ մի ոստիւնով թռաւ առուակից, հաստատուն քայլերով մօտեցաւ նրան և նրա երկայն հրաշալի գիսակները փաթաթեց իւր ձեռքին:

—Անզգամ,—ասաց նա կատաղի շշընջիւնով,—դու, որ դաւաճանեցիր քո ամուսնուն ինձ համար, կարող ես մի օր դաւաճանել և ինձ ուրիշի համար: Ահա քեզպէսների վարձատրութիւնը:

Ու լուսնի լոյսի տակ փայլեց նրա դաշոյնը և մխուեցաւ կնոջ մարմարեայ կուրծքը:

«Ա՜խ» եղաւ գեղեցկուհու վերջին խօսքը, և նրա դիակը գլորուեց սառն առուակի մէջ:

Երիտասարդը նորից թռաւ առուակից այս կողմը և արագ քայլերով, գլուխը բարձր բռնած, անցաւ հեռացաւ հրապարակից:

Դերվիշը դուրս եկաւ իւր թագստատեղից և շտապեց դէպի իւր փոքրաւորը:

—Ի՞նչ տեսաք, տէր իմ,—հարցրեց փոքրաւորը:

—Տեսածիս արդիւնքը վաղը կիմանաս,—պատասխանեց մեծաւորը յուզուած ձայնով,—իսկ այժմ հետևիր այդ երիտասարդին, իմացիր որտեղ է ապրում և առաւօտեան բերել տուր պալատ:

—Պատրաստ եմ կատարելու ձեր հրամանը, տէր իմ:

Փոքրաւորը պարսից մեծ վեզիրն էր, իսկ մեծաւորը—Շահ-Աբբասը:

II.

Հետևեալ օրը Շահ Աբբասը մեծ վեզիրից պահանջեց մեզ ծանօթ երիտասարդին: Մի քանի րոպէից յետոյ արքայական դահլիճի դռները բացուեցան, և ներս մտաւ երիտասարդը գունատուած, ամբողջ մարմնով դողալով: Դրան շէմքում կանգ առնելով նա եօթն անգամ մէջքից ծալուեց և գլուխ տուեց արքայից արքային:

—Ի՞նչ է անունդ,—հարցրեց շահը իւր սովորական խրոխտ ձայնով:

—Իսմայիլ, ձեզ ծառայ,—դողդոջուն ձայնով պատասխանեց երիտասարդը:

—Իսկ ո՞վ է քո հայրը:

—Իմ հայրը հռչակաւոր Հիւսէն-փաշ-

ՔՐՈՆԻԿՈՆ

Վեհափառ Հայրապետը բարեհաճել է *օրհնութեան կոնդակ* շնորհել տիկին Նաղիրեանին այն բանի համար, որ նա Ներսիսեան դպրոցը կառուցանելու համար էջմիածնին նուիրել է Արսենալի մօտ գտնուած իւր գեանից չորս դեսեասին հող։

— Ինչպէս հաղորդել էինք «Նոր Դար»-ի նախընթաց համարում, Ալէքսանդրոպոլի ժողովուրդն առաջիկայ դատական տոներին մխիթարելու համար հրամայուած էր արժ. Գրիգորիս վարդապետ Տէր-Յակոբեանին անմիջապէս Ալէքսանդրոպոլ ուղևորուել ս. Էջմիածնից։ Այժմ մեզ հաղորդում են, որ Մատթէոս վարդապետի՝ յիշեալ յաջորդութիւնը կառավարելու անընդունակութեան պաճառով՝ Ալէքսանդրոպոլի յաջորդ է նշանակուած արժ. Գրիգորիս վարդապետ Տէր Յակոբեան։

— Այսօր, մարտի 13-ին, Թիֆլիսի դատական պալատում նշանակուած է Բագուի հայոց մարդասիրական ընկերութեան դպրոցական շէնքի զրաւման գործի քննութիւնը։ Այդ դատին ներկայ լինելու համար Պետերբուրգից եկած է լուսաւորութեան մինիստրութեան իւրիսկոնսուլտ պ. Մամոնտով։

— Լուսաւորութեան մինիստր Ն. Պ. Բագալեպովի կեանքի դէմ սպանութեան փորձ անելուն համար մեղադրուող Պետր Կարպովիչը, մայրաքաղաքի թերթերի ասելով, հրաժարուել է փաստաբան ունենալուց, և նրան պաշտպանելու համար դատարանը կընչանակի երդուեալ հաւատարմատար Ա. Ն. Տուրչանինովին։

— Ռուս թերթերը հաղորդում են, որ Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձու Կ. Պ. Նանովսկու վերադարձը Պետերբուրգից յետաձգուած է անորոշ ժամանակով։

— Նաւթարդիւնաբերական մի նոր ընկերութիւն է կազմուած «Արամազդ» անունով։ Հիմնադիրներն են տոհմական պատուաւոր քաղաքացի Կ. Տէր-Մարգարեան, հանքային ինժեներ Ա. Վաչեան, Բագուի առաջին կարգի վաճառականի որդի Ա. Կրասիլնիկեան, Բագուի երկրորդ կարգի վաճառական Մ. Խուրլարեան, Շուշու քաղաքացի Մ. Խունունց և Շուշու երկրորդ կարգի վաճառականներ Ց. Թադէոսեան, Մ. Շահնազարեան և Ն. Մելիք Փաշայեան։ Հիմնական դրամագլուխը 4 միլիոն ռուբլի է, բաժանուած 16,000 ակցիայի, իւրաքանչիւր ակցիան 250 ր. արժողութեամբ։ Ընկերութեան կանոնադրութեան ծրագիրն արդէն ներկայացուած է ուր հարկն է ի հաստատութիւն։

— Ներկայումս Թիֆլիսումն է ամերիկեան «Ուաշինգտոն» ֆիրմայի ներկայացուցիչ պ. Սպիրո և ցոյց է տալիս նոր հնարուած մի լապտեր, որը վառւում է կերոսինով, բայց որի լոյսը, ինչպէս հաւատացնում է նա, պակաս զօրեղ չէ ելեկտրական լոյսից։ Այդ լապտերը գիշերները վառւում է Երևանեան հրապարակի մէջ տեղը գտնուած սիւնի վրայ, քաղաքային վարչութեան թոյլտուութեամբ։

— Թեհրանի ռուսաց փոխատու բանկի գանձապահ Շաբունինի սպանութեան գործը քննելով Բագուի նահանգական դատարանն, ինչպէս հաղորդուած էր իւր ժամանակին, արդարացրել էր մեղադրուող տիկ. Ջէյրանեանին։ Այժմ «Նով. Օր.»հաղորդում է, որ այդ արդարացման դէմ բողոք է յարուցել պրոկուրորի օգնական Վ. Ն. Սարուվէն։ Իսկ դատապարտուած Ջէյրանեանը և Յովհան Նիսեանը մարտի 8 ին վճռաբեկ բողոք են տուել դատական պալատին։

— Կիրակի, մարտի 11-ին, արքունական թատրոնում ներկայացրին «Այիդա» օպերը, երեւելի տենոր Դիւկի մասնակցութեամբ, որ կատարում էր Ռամֆեցի դերը։ Ինչ տեսակ պակասութիւններ էլ որ գտնելու լինին Դիւկի ձայնի, երգեցողութեան և խաղի մէջ, մի բան հաստատ է, որ Թիֆլիսի թատրոնի բեմից, և առհասարակ աւելի շատ նշանաւոր քաղաքների թատրոններում այդպիսի մի զօրեղ, ահագին ձայն չէ լսուել։ Զարմանալին այն է, որ բարձր դ-ին հասնելով Դիւկի ձայնը մնում է պարզ, և երգիչն ամենայն հանգստութեամբ երգում է թատրոնը հիմքից դղրդացնելով։ Դիւկը իւր ձայնով կարողանում է այնպիսի զօրեղ ազդեցութիւն անել, ինչ ազդեցութիւն կարող էին անել մի քանի երգիչներ միասին երգելով, և այն՝ օրկեստրի դաշնակցութեամբ։ Դիւկի հունարն իսկապէս ձայնի ոյժի մէջ է, որ հսկայական է, և որը կարելի է համեմատել միմիայն Տոմանոյի ձայնի հետ։

— Խմբագրութիւնս ստացաւ իշխ. Էսպեր Ուխտոմսկու «Изъ Китайскихъ писемъ» վերնագրով մի նոր բրոշիւրը, որը տպուած է Պետերբուրգում սոյն 1901 թ.։ Հեղինակը միակն էր, որ, իբրև ռուս մամուլի ներկայացուցիչ, անցած տարի գնացել էր Չինաստան։

ՎՐԻՊԱԿ.—«Նոր-Դար»-ի նախընթաց համարի առաջնորդողում մի սխալ է սպրդել։ Առաջնողի 3-րդ սիւնակում փոխանակ կարդալու՝«Երբ Գերմանիան և Ռուսիան գլխաւոր և հիմնաւոր կէտերում միմեանց հետ համաձայնեն, դրանց են համաձայն կը լինին» և այլն, պէտք կարդալ՝ «.... միմեանց հետ համաձայնեն, դրանց հետ էլ համաձայն կը լինին» և այլն։

—

ՄԵԶ ԴՐՈՒՄ ԵՆ

ՍՂՆԱԽԻՑ.—Քաղաքումս լուրեր են պտտում, իբր թէ քաղաքային վարչութիւնն ուզում է գատարկել տալ այն շինութիւնը, որտեղ քաղաքային դպրոցն է գտնւում և որ քաղաքին է պատկանում, եթէ նոր ուսումնական տարուանից ըրեհը չեն աւելացնել (այժմ 600 ր.)։ Ցանկալի է, որ լուրերը ճշտուին, քանի որ այդ ուսումնարանը թէպէտ քաղաքային անուն է կրում, սակայն լը ցուած է գիւղացիներով, այնպէս որ քաղաքացիք շատ քիչ են օգտուում, մանաւանդ որ ուսումնավարձից ազատ է վրացի գիւղացիների մեծամասնութիւնը, որ թէպէտ գիւղացի՝ սակայն ահագին հարստութեան տէր է, իսկ քաղաքացիք որովհետև միջոց չունին, այդ պատճառով ստիպուած են կամ «Լիանոզեան» միագասեան ժողովրդական ուսումնարանը տալու իրենց որդոցը և կամ բոլորովին անկիրթ թողնելու։

— Գործակալ հ. Ազչակ քահ. որ կրօն և հայոց լեզու է աւանդում տեղիս դրպրոցներում, տեղիս օրիորդաց «Մարիաննեան» ուսումնարանում դադարեցրել է հայոց լեզուի դասաւանութիւնը, որովհետև ուսումնարանն այս ուսումնական տարուանից ոռճիկ չէ տալիս հայոց լեզուի համար։ Հրաւիրում ենք այս խնդրի վերայ ուշադրութիւնը քաղաքային վարչութեան, որ տարեկան 600 ր. նպաստ է տալիս այդ ուսումնարանին. նմանապէս հոգևոր իշխանութեան ուշադրութիւնն ենք դարձնում նոյն խնդրի վերայ։ Գուցէ կան քաղաքումս մարդիկ, որոնք նոյն իսկ ձրիաբար յանձն կառնեն այդ դասերը։

—

ԼԱԳՈՒՆԱԽԻՑ (Սղնախի գաւ.).—Լագուդախում հրդեհը մշտական անպակաս է. մի շաբաթ առաջ այրուեց եղբ. Նարի Նեանցների մի փոքր սարայը, որը բարեբախտաբար դատարկ էր. ծխախոտի ամբարը մեծ սարայումն էր, բայց և այնպէս 300 ռուբլու վնաս կրեցին. իսկ երեկ, մարտի 7-ին, կէս գիշերին այրուեց մի մեծ սարայ 500 պուդ կապած պատրաստի ծխախոտով, որը պատկանում էր Վասօ Ամիրաղեանին և Տիգրան Սերեբրեակեանին։ Այստեղ սարայներն առհասարակ խոտից և եղեգնից են շինուած, այդ պատճառով էլ հրդեհ շատ հեշտութեամբ է պատահում. մի չնչին անզգուշութիւն, մի վիրաւորիչ խօսք և կամ մի քանի արասու հաշիւ բանտոր մշակների հետ բաւական է, որ հրդեհ առաջանայ։ Այրուող սարայն ունէր մի երկու պահապան վրացի մշակներ, որոնք ասում են, որ ոչինչ տեղեկութիւն չունին հրդեհի պատճառների մասին։

—Անցած կիրակի, մարտի 4-ին, տեղիս զօրագնդի մէջ, եղած 80-ից աւելի հայ զինուորներն ընդունեցին ս. հաղորդութիւն, որից յետոյ, քահանայի աշխատութեամբ, հասարակութեան կողմից ճաշ տրուեցաւ նրանց։

—

ԹԱՒՐԻԶԻՑ.—Համաձայն շահի հեռագրով արած կարգադրութեան, այսուհետև Ռուսիայից Պարսկաստան և Պարսկաստանից Ռուսիա արտահանուող և ներմուծուող ապրանքներից մաքս պիտի վերցնուի հարիւրին հինգ տոկոս, մինչդեռ առաջ մաքսը 3-4 էր պարսկահպատակների համար։ Իսկ կենսական մթերքների արտահանութիւնը Պարսկաստանից Ռուսիա արգելելու համար, այդ ապրանքների վրայ մաքս նշանակուած է հարիւրին 75 տոկոս։

—Մարտի 18-ին նշանակուած է պատգամաւորական ընտրութիւն առաջնորդական խնդրի համար։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍԻԱՑԻՑ

(«Նոր-Դար»-ի թղթակից)

—

ՊԱՐԻԶ, 13 մարտի (Ն. տ) — Լրագրները մի կողմից ապաղակում են, թէ ֆրանսիական բնակչութեան թիւը պակասում է, միւս կողմից այն գաւառները, ուր բնակչութեան ծնդաբերութիւնը մեծ է, գանգատւում են ապրուստի պակասութիւնից։ Մարդ, հետևելով այդ լուրերին, ակամայ համաձայնում է յայտնի վիպագիր Միրբոյի հետ, թէ աւելի լաւ է, որ մի ժողովուրդ սակաւաթիւ լինի և կուշտ ու երջանիկ, քան բազմաթիւ և քաղցած ու թշուառ։

Բնակչութեան պակասելու բազմաթիւ օրինակներից աչքի են ընկնում հետևեալ օրինակները. օրինակ՝ Ռոնժի անագին գիւղում, ուր 264 ընտանիք կայ, 1900 թուականին և ոչ մի ծնունդ չէ եղել. Բէզիո գաւառի գիւղերից մէկում, ուր 400 տուն բնակիչ կայ, սկսած 1880 թուականից մինչև այսօր բնակիչների թիւը չէ աւելանում։

Դրա հակառակ՝ աչքի է ընկնում հետևեալ երևոյթը. նոյն Բէզիո գաւառում կան գիւղեր, ուր բնակւում են բանտոր դասակարգին պատկանող ընտանիքներ։ Ամեն ընտանիքում կայ ոչ պակաս քան 8 երեխայ. ընտանիքի հայրը շահում է օրական մի ֆրանկ 75 սանտ. մինչև 2 աղջիկների կեանքը, այլ նոյն իսկ քեզ իւր սիրելիների թւում կրդասի, իսկ կանանց կրսիրի աւելի, քան առաջ։ Միայն թէ դու ամբողջ պատասխանատուութիւնն իմ վրայ թող։

—Վատահ ես քո վրայ, հայր։

—Կատարելապէս վստահ։

—Իսկ ինչով յագեցնեմ այն ատելութեան ծարաւը, որ երեկուայ դէպքից յետոյ զգում եմ դէպի կինը։

—Քո այդ ատելութիւնը մի կրակ է, որ պիտի հանգչի իմ այն խօսքերով, որոնցով պիտի շիջանի Շահ-Աբբասի բարկութիւնն ու ատելութիւնը։

—Խոստանում եմ հետևել խորհուրդներիդ և կատարել պատուէրդ,—վերջ տուեց խօսակցութեան Շահ-Իսմայիլը, և հայր ու որդի բաժանուեցան։

—

Երեկոյեան նոր թագաւորի մունետիկները պտտում էին մայրաքաղաքի փողոցներում ու շուկաներում և բարձրաձայն յայտարարում էին. «Արեգակնափայլ շահն-շահը ողորմածութեամբ ներեց կանանց և աղջիկներին՝ տալով նրանց կատարեալ ազատութիւն։ Նորին արեգակնափայլութեան հրամանն է եօթ օր ուրախութիւն և եօթ գիշեր լուսավառութիւն անել մայրաքաղաքի ամեն մասերում և օրհնել նրա կեանքը, որ փրկեց ձեզ մօտալուտ վտանգից»։

Ամբողջ քաղաքը ըոպէապէս փոխուեցաւ. լացի ու հեկեկանքի տեղ այժմ լսւում էր զուռնա-նաղարի ձայնը, իսկ անէծքի փոխարէն անվերջ օրհնութիւններ։ Շահ-Իսմայիլն իւր հօր ու մեծ վեզիրի հետ ծպտուած կրօսնում էր քաղաքում և հրճւում էր տեսնելով անչափ ուրախութիւն, որի պատճառն ինքն էր։

(Վերջը սիւս անգամ)

Արտ. Նազարեան

Բինաբ (Պարսկաստան)

ելանն է, որ այժմ ծերացած ու գործից ընկած լինելով՝ ամբողջ օրը տանն է անցկացնում։

—Իսմայիլ,—ասաց շահը,—բայց արա ականջներդ և ուշադրութեամբ միտ առ բոլոր ասածներս։ Այսօր ես ճանապարհւում եմ դէպի հեռաւոր անտառներն ու բլուրները որսորդութեան։ Իմ այդ որսորդութիւնս կըտևի քառասուն օր. իսկ այդ քառասուն օրուայ ընթացքում թագաւորութիւնս քեզ եմ յանձնում և հրամայում եմ, որ բոլոր կանանց և աղջիկներին, սկսած եմ հարեմներից մինչև վերջին մշակի կինն ու աղջիկը, սրի անցնես։ Վա՛յ քեզ, եթէ քառասուն օրից յետոյ, երբ քաղաք կըվերադառնամ, մի հատ կին կամ աղջիկ գտնեմ թագաւորութեանս մէջ։ Հաստատիմացած եղիր, որ այդ դէպքում մեծ կտրող ականջ կըլինի։

Բոլոր պալատականները սարսափից զունատուեցան։ Մինիստրներից մի քանիսը նոյն իսկ քիչ մնաց կաթուածահար լինէին լսելով իրենց կանանց ևս սպասող վտանգը։ Երիտասարդ Իսմայիլն ազատ շունչ քաշեց և կրկին անգամ գլուխ տալով ասաց.

—Աբբայ հզօր, ես ինչպէս կըհամարձակուեմ ձեր խանումներին ձեռք տալ։ Ինձ համար նոյն իսկ մահացու մեղք է ձեր սուրբ հարեմխանան մտնելը։

—Դու կըհամարձակուես այդ անել, որովհետև քո տէրն է այսպէս հրամայում,—ասաց շահը։

—Իսկ ինչով էք արժանի համարում ինձ, որ ձերդ արեգակափայլութեան փոխանորդ էք նշանակում ինձ։

—Քեզ այդ պաշտօնին արժանի դարձնողը երեկ գիշերուայ դէպքն է։

Երիտասարդը լուռ գլուխ տուեց։

—Իսկ դուք,—ասաց թագաւորը խօսքն իրեն շրջապատող նախարարներին ուղղելով, բոլորդ էլ պարտաւոր էք հնազանդել Իսմայիլին, որ այսօրուանից մինչև քառասուն օր ձեր թագաւորն է. հրամայում եմ ձեզ կատարել նրա բոլոր հրամանները, ինչպէս կատարում էիք իմը։

Ու գահից իջնելով հանեց գլխից թագը, դրեց Իսմայիլի գլխին, կապեց նրա մէջքին իւր գօտին, ձգեց նրա վրայ իւր ծիրանին, հանեց մատից արքայական մատանին, դրեց նրա մատը և նստեցրեց նրան իւր գահի վրայ։ Ապա նորից դարձաւ իւր նախարարներին և ասաց.

—Ողջունեցէք ինձ յետ ձեր նոր արքային։

—Ողջոյն արքայից արքայ Շահ-Իսմայիլին,—Շահ-Աբբասի հետ միասին գոչեցին նախարարները մինչև գետին խոնարհուելով Իսմայիլի առաջ։

Երաժշտական խումբն իւր նուագածութեամբ շնորհաւորեց Շահ-Իսմայիլի գահ բարձրանալը և բարի ճանապարհ մաղթեց Շահ-Աբբասին։

—

Սպահանն ահ ու սարսափի մէջ էր։ Ամեն կողմից լսւում էր լաց ու աղաղակ, ամեն բերան անիծում էր շահին իւր նոր կարգադրութեան համար։ Շահ-Աբբասն արդէն հեռացել էր քաղաքից։ Նրա յետևից շատերը կամեցել էին իրենց կանանց ու աղջիկներին փախցնել հարևան երկրները, բայց քաղաքի դռները բռնուած էին բազմաթիւ զօրքերով, իսկ պարիսպներից ցած իջնելն անհնարին էր։

Ամբողջ քաղաքն իրար էր անցել։ Փողոցներում կարելի էր տեսնել շփոթուած, վախեցած, գունատուած ու սարսափած դէմքեր միայն։ Մարդիկ խելագարների պէս այս ու այն կողմն էին վազում։

Դժոխային այդ ժխորի մէջ իւր անհոգ ու անտարբեր հայեացքով աչքի էր ընկնում մի յաղթանդամ ծերունի։ Նա առաջ էր գնում արագ քայլերով առանց իւր շուրջն անգամ նայելու։ Դուրս գալով քաղաքի մեծ հրապարակը, նա գիմեց դէպի թագաւորական պալատը։ Դռան առաջ նրա առաջը կարեց պալատական պահապան զինուորը և հարցրեց.

—Ի՞նչ ես ուզում։

—Ուզում եմ Շահ-Իսմայիլին տեսնել։

—Ո՞վ ես դու, որ յանդգնում ես այդպիսի մի ցանկութիւն ունենալ։

—Այդ քո գործը չէ,—պատասխանեց ծերունին և կրկին ուզեց ներս մտնել։ Բայց պահապանն այս անգամ ևս ընդդիմացաւ։ Ծերունին բռունցքի մի ուժգին հարուածով գետին տապալեց նրան և առաջ անցաւ։ Մտնելով պալատական սենեկապետի ընդունարանը, ծերունին ասաց նրան.

—Գնա, ասա Շահ-Իսմայիլին, որ իւր հայրը Հիւսէնը եկել է և ուզում է մի քանի ըոպէ առանձին խօսակցութիւն ունենալ իւր հետ։

Սենեկապետը մտաւ շահի առանձնասենեակը և մի քանի ըոպէից յետոյ վերադառնալով՝ առաջնորդեց ծերունուն պալատի առանձնարանը։ Զատ չանցած ներս մտաւ և նոր շահը։

—Բարև, հայր։

—Բարև, զաւակս, շնորհաւորում եմ առժամանակեայ թագաւորութիւնդ և հետաքրքրւում եմ իմանալու, թէ ինչը հասցրեց քեզ այդ փառքին, որ ինձ ոչ մի ուրախութիւն չի պատճառում։

Շահ-Իսմայիլը պատմեց իւր գլխի եկածը և հարցրեց, թէ ինչի՞ նա չի ուրախանում իւր քառասնօրեայ թագաւորութեան համար։

—Որովհետև,—պատասխանեց ծերունին,—դու թագաւոր ես նշանակուել մի զզուելի եղեռնագործութիւն կատարելու համար միայն և առանց ամաչելու դու պարծենում ես այդ եղեռնագործութիւնն սկսելու։ Մի՞թէ դու չես լսում մայրաքաղաքի լացն ու աղաղակը։ Մի՞թէ դու չես լսում մանկահասակ կանանց հեկեկանքն ու անէծքը։ Մի՞թէ դու այնչափ սատրացել ես, որ ամբողջ երկրի գեղեցիկ սեռն աղտեղելու համար չես կարող կեանքդ զոհ բերել։

—Ոչ, հայր իմ, ես այնչափ չեմ սատրացել, որչափ դու ես կարծում,—պատասխանեց Շահ-Իսմայիլը վիրաւորուած մարդու եղանակով։—Եթէ ես սատր մէկը լինի, երբէք չէի կարող արժանանալ այս փառքին, որ քո կարծիքով շլացրել է ինձ. բայց իրօք այդպէս չէ։ Եթէ ես համոզուած լինէի, որ Շահ-Աբբասն իւր որսորդութիւնից վերադառնալուց յետոյ ինձ սպանել տալով կըների գեղեցիկ սեռին, ես անարգիր կըսպասէի այդ օրուան։ Բայց գիտեմ, որ ինձ գլխատել տալուց յետոյ էլ նա կոտորել կըտայ բոլոր կանանց և աղջիկներին, որոնց նա սկսել է սարսափելի ատել այն գիշերուայ դէպքին հանդիսատես լինելուց յետոյ։ Նա ինձ լրտեսելիս է եղել դերվիշի հագուստով. մեծ վեզիրը պատմեց ինձ այդ։

—Ուրախ եմ սիրելիս, որ քո երակների մէջ վազում է քո քաջ հօր՝ փահլևան Հիւսէյնի արիւնը,—ասաց ծերունին.—բայց դու ինձ աւելի ևս զուրախացնես, եթէ լսես իմ խնդիրը և խնայես կանանց ու աղջիկների այդ ահագին բազմութիւնը։ Ես քեզ խօսք եմ տալիս, որ երբ Շահ-Աբբասը մայրաքաղաք վերադառնայ, համոզեմ նրան, որ ներէ թէ քեզ և թէ գեղեցիկ սեռին։

—Մի՞թէ այդ կարելի է,—զարմացած բացականչեց երիտասարդ թագաւորը։

—Այո, կարելի է. թէ ինչպէս՝ այդ քո գործը չէ։ Թագաւորը ոչ միայն կըխնայի քո և իւր հպատակ կանանց ու աղջիկների կեանքը, այլ նոյն իսկ քեզ իւր սիրելիների թւում կրդասի, իսկ կանանց կրսիրի աւելի, քան առաջ։ Միայն թէ դու ամբողջ պատասխանատուութիւնն իմ վրայ թող։

—Վստահ ես քո վրայ, հայր։

—Կատարելապէս վստահ։

—Իսկ ինչով յագեցնեմ այն ատելութեան ծարաւը, որ երեկուայ դէպքից յետոյ զգում եմ դէպի կինը։

—Քո այդ ատելութիւնը մի կրակ է, որ պիտի հանգչի իմ այն խօսքերով, որոնցով պիտի շիջանի Շահ-Աբբասի բարկութիւնն ու ատելութիւնը։

—Խոստանում եմ հետևել խորհուրդներիդ և կատարել պատուէրդ,—վերջ տուեց խօսակցութեան Շահ-Իսմայիլը, և հայր ու որդի բաժանուեցան։

—

Երեկոյեան նոր թագաւորի մունետիկները պտտում էին մայրաքաղաքի փողոցներում ու շուկաներում և բարձրաձայն յայտարարում էին. «Արեգակնափայլ շահն-շահը ողորմածութեամբ ներեց կանանց և աղջիկներին՝ տալով նրանց կատարեալ ազատութիւն։ Նորին արեգակնափայլութեան հրամանն է եօթ օր ուրախութիւն և եօթ գիշեր լուսավառութիւն անել մայրաքաղաքի ամեն մասերում և օրհնել նրա կեանքը, որ փրկեց ձեզ մօտալուտ վտանգից»։

Ամբողջ քաղաքը ըոպէապէս փոխուեցաւ. լացի ու հեկեկանքի տեղ այժմ լսւում էր զուռնա-նաղարի ձայնը, իսկ անէծքի փոխարէն անվերջ օրհնութիւններ։ Շահ-Իսմայիլն իւր հօր ու մեծ վեզիրի հետ ծպտուած կրօսնում էր քաղաքում և հրճւում էր տեսնելով անչափ ուրախութիւն, որի պատճառն ինքն էր։

(Վերջը սիւս անգամ)

Արտ. Նազարեան

Բինաբ (Պարսկաստան)

ֆրանկ (60—80 կոպ)։ Այդ 80 կոպէկով ինչպէս կերակրուեն 10 հոգի։ Ահա այդ ծանր անտանելի վիճակն է, որ առաջացնում է Ֆրանսիայում գործադուլաները, և կառավարութիւնը շատ իրաւացի է, մտածելով որ ոչ թէ պէտք է քաղցած ժողովրդին ոյժով ճնշել և սպանել քաղցից այլ պէտք է բարուոքել նրա անտանելի վիճակը։

* *

Մինչդեռ միլիօնաւոր հոգիներ արիւն քրտինք են թափում մի կտոր չոր հացի համար, միլիօններ են կազմում և նրանց թիւը, որոնք ապրում են տոկոսներով և որ Եւրոպայում յայտնի են rentier (տոկոսակեր) անունով։ Ֆրանսիական թերթերը հետաքրքրական վիճակագրութիւն են հրատարակում Ֆրանսիայի տոկոսակերների վերաբերմամբ։ Ճշգրիտ վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ Ֆրանսիայում տոկոսակերների թիւն է 237,090, որոնցից տղամարդիկ—129,626 հոգի, որոնց տարեկան եկամուտն է միայն տոկոսներից 18,425,405 ֆրանկ, և կանայք—107394, որոնց եկամուտն է 16,467,449 ֆրանկ։ Այդ բոլոր պարոնեայ տոկոսակերների մէջ 103,929 հոգի ունին օրական 2—50 ֆրանկ եկամուտ, 92,225 հոգի 51—200 ֆրանկ օրական, 17490 հոգի 201—360 ֆր. օրական, և 11648 հոգի 361—600 ֆրանկ, 8864 հոգի 601—2200 ֆր. օրական, և 1934 հոգի 1201 1500 ֆրանկ օրական։

Այս եկամուտները բաւական մօտ են հայ վրացեանների եկամուտներին։

* *

Օրէնք է, սրբազան, սրբագործուած օրէնք, որ հայ խմբագիրը, հեղինակը, գրագէտը պիտի վաճառէ իր ժառանգական կայքը, իր տունը, տեղը, մինչև անգամ իր կաշ կարասիքը և...գրքերը։ Օրէնք է, որ հայ գրագէտը քաղցած մնայ մինչև մահը և միշտ պահանջ լինի նրա շլինքին պահպանելու «ազգի պատիւը»։ Օրէնք է, որ հայ գեղարուեստագէտը, նկարիչը համարուի ներկաբար ու կտաւ չունենալով իր շապկի վրայ նկարէ իր նկարները։ Օրէնք է, որ աւանակ վաշխառուն ծիծաղէ գրականութեան ու գեղարուեստի մշակների վրայ, որոնք հայ ազգի մէջ մուրացկանի վիճակին նախանձելու աստիճանի ստորացած են։ Բայց ահա կայ Եւրոպայում մի երկիր, ուր գրականութիւնը և գեղարուեստ աւելի են շահում, քան վաշխառուների տոկոսաբեր թղթերը։

Ես դեռ չեմ խօսում գրականութեան մասին. չեմ հաշւում այն, որ Ռոստանի «Էգլոն» և «Սիրանօ-դը Բերժըրաք» գրուածները մի քանի հարիւր հազար օրինակներով վաճառուեցին մի ամսուայ ընթացքում. չեմ ասում այն, որ «Տրկին Ռոլանդի նամակները» (18 ֆրանք արժողութեամբ) երկու շաբաթուայ ընթացքում վաճառուեցին 300 հազար օրինակ, այլ ուզում եմ պատմել մեր հայրենակիցներին գեղարուեստական վաճառքի մի դէպք, որ մեր տոլմայից և քիւֆթայից տրաքւող գգումներին ոչ բաւ կենայ։ Երկուշաբթի օրը, մարտի 11-ին, Պարիզի «Օտել Դրուօ» կոչուած գեղարուեստական վաճառանոցում վաճառում էին զանազան նկարիչների երկեր և ահա թէ ինչ գնով վաճառուեցին այդ երկերը.—Հարպենի «Նոճիները» վաճառուեց 13,050 ֆրանկի. դա մի փոքրիկ նկար է մի քառակուսի արշին մեծութեամբ. Սանեսի «Ծնի օրը» նկարը վաճառուեց 7000 ֆր., Ժոկինդի «Մարսէյլ» նկարը վաճառուեց 10,000 ֆրանկի, նոյն նկարչի «Դորդրէշի ջըրանցքը» 16,600 ֆրանկի, Մոնէի «Պարտէզ» նկարը 10,300 ֆր., Ժոկինդի «Գիշերը» 12,700 ֆրանկի, և այլն և այլն. մի խօսքով այդ օրը նկարիչ գեղարուեստագէտները շահեցին 389,960 ֆրանկ։

Այս էլ նման է մեր գեղարուեստագէտների եկամուտներին։

* *

Ծանր, երկիւղալի գուշակութիւններ է անում ներկայ մարտի 23 ի (ն. տ. մարտ 10) համար Չիլոնի (Զվէյցարիա) աստղաբաշխական կայարանի յայտնի կառավարիչ պրոֆեսոր Ժիւլ Կարպէն, որի օդերեւութաբանական նախագուշակութիւնները միշտ կատարուել են։ Արդէն Եւրոպայում և Աֆրիկայում եղանակն այս տարի տարօրինակ քմահաճոյքներ է ցոյց տալիս, սոսկալի հողմեր, անդադարում անձրևներ, ձիւն և կարկուտ միասին և անտանելի ցրտեր, որոնք Ֆրանսիայում և Անգլիայում հազարաւոր մահեր են պատճառում։

Այժմ պ. Կարպէ գուշակում է իր գիտնական հետազօտութեանց հիման վրայ, որ մարտի 23 ը սոսկալի վտանգաւոր օր պիտի լինի Մադագասկարի, Մոզամբիկեան ջրանցքի, Հարաւ Աֆրիկեան հասարակապետութեան, Ռէյնիոնի, Մաւրիսի, Կոմորի, Զիբրալդի և Ամոաի համար, մի խօսքով այն ամեն երկրների համար, որոնք գտնւում են աբեղեան երկայնութեան 24° և 55 աստիճանների տակ և նոյնպէս հիւսիսային և հարաւային լայնութեան 17° աստիճանների տակ։ Պարոն Կարպէ պնդում է, թէ տասնեմէկին ինն հաւանականութիւն կայ, որ այդ երկրները կենթարկուեն սոսկալի չտեսնուած ցիկլոնների և փոթորիկների։ Դժբախտութիւնը պիտի տեղի ունենայ ամսոյս 23-ին՝ կէսօրից յետոյ կամ երեկոյին։

Ստուած պահպանէ Բագուն այդ տեսակ դժբախտութիւնից, ինչպէս պահպանեց Սոդոմ Գոմորը։

Ս. Հախումեան

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ *)

(«Նոր-Դար»-ի թղթակցութիւն)

ՄԱՐԱՂԱ, 9 փետրուարի.—Երեկ առաւօտեան ս. պատարագից յետոյ հասարակութիւնը հոգևոր թափորի առաջնորդութեամբ գնաց թատերարահը, ուր տեղի ունեցաւ հանդէս Վարդան զօրավարի և իր ընկերների յիշատակին։ Հանդէսի ծրագիրը կազմուած էր շատ անկանոն կերպով. երգեր շատ քիչ կային, ծրագրի մէջ գլխաւոր տեղը բռնում էին 10—15 հատ հին ոտանաւորներ, որոնք օրուայ տօնի հետ ոչ մի կապ չունէին։ Կարդացուեցան երկու ճառեր ևս, որոնք ոչ մի նորութիւն չտուին. սակայն մի շատ ուրախալի երևոյթ էր, որ ճառեր կարդացողներն օրիորդներ էին։ Մինչև վերջին տարիները Մարաղայում աղջկայ բեմ բարձրանալը համարւում էր ուղղակի անբարոյականութիւն։ 1899 թուականի նոյեմբերի 6 ին երկու օրիորդներ բեմ բարձրացան, որոնցից մէկն արտասանեց մի ոտանաւոր, իսկ միւսը երգեց մի երգ։ Հետևեալ ներկայացման համար պատրաստուած երգեցիկ խմբի մէջ կային 16 օրիորդներ և մի տիկին։ Երրորդ անգամ, նրանք բեմ բարձրացան դաւաշարի մէջ քրդական հագուստով. Թէև շատ մեծ նեղութիւններից և երկար ջանքերից յետոյ կարելի եղաւ այդ անսպասելի յաջողութեան հասնել, Թէև այդ օրիորդները ենթարկուեցան անխիղճ բամբասանքների, այսուամենայնիւ բեմ բարձրանալն սկսում է սովորական դառնալ։ Այսօր պարսկահայ օրիորդը ճառ է արտասանում, այն էլ Մարաղայում։ Թէև ճառն ինքնուրոյն չէ, Թէև նա չի կարողանում լաւ ըմբռնել իր կարդացածի միտքը, այսուամենայնիւ դա մի շատ մեծ առաջդիմական քայլ է, որ կարող է ամեն մի զգեստէր հայի ուրախութիւն պատճառել։ Կանցնի մի առ ժամանակ, և Մարաղայի հայ օրիորդը ժամանակակից մրցումից գրգռուած ինքնուրոյն ճառեր կըյօրինի. կըգայ ժամանակ, երբ նա արհամարհելով ժողովրդի բամբասանքը բեմ դուրս կըգայ ներկայացումներին մասնակցելու։ Ժամանակը, աշխատանքը և համբերութիւնը ոչնչացնում են ամեն տեսակ դժուարութիւնները։

Պէտք է խոստովանած, որ պարսկահայ օրիորդներն այնչափ անպարծ ու խոստապահանջ չեն, որչափ երիտասարդները։ Առածս հաստատելու համար բերեմ մի օրինակ Ալբրթական ընկերութեան վերջին ներկայացման մասնակցող երիտասարդներից ոմանք վիրաւորուել են, որ ես իմ թղթակցութեան մէջ նրանց չեմ գովել։ «Եթէ նոյն իսկ մեր դերերը փչացրած էլ լինէինք, թղթակիցը պէտք է գոված լինէր մեզ, որպէսզի խրախուսէինք (?) և միւս անգամ ևս մասնակցէինք ներկայացումներին»,—ասում են նրանք։ Այս էլ մեր ազգային գործիչները..

— Մեզ մօտ եղանակները յանկարծակի փոխուեցան. կատարեալ գարնանային եղանակ է սկսուել։ Երկու օր է, որ անձրև է գալիս։ Ներկայ անձրևն ու ձիւնն առատ հունձ են խոստանում. այդ պատճառով հացահատիկների արժէքները բոլորովին ընկել են. ամենաընտիր ցորենի խալվարը կարելի է գնել ութը թումանով (պուդը 40 կոպ.), իսկ գարունը 4 - 5 թումանով (պուդը 20 - 25 կոպ.)։

—Ինչպէս որ դիֆտերիտին յաջորդել էր ինֆլուէնցան, այնպէս էլ վերջինիս յաջորդեց կրկին դիֆտերիտն աւելի սաստկութեամբ։ Այս անգամ հայերի մէջ աւելի է տարածուած։ 180 տուն հայերի երեխաներից հիւանդանում են մէջին թւով օրական հինգ և մեռնում է մի հոգի։ Ծնողների անփութութիւնն ու տգիտութիւնը կրկնապատկում են զոհերը։ Հիւանդութեան պատճառով տեղիս ազգային դպրոցն առժամանակեայ կերպով փակուեցաւ։

Dard

*] Սոյն նամակն ուշ է հասել խմբագրութեան։ Խմբ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄԱԿԵԴՈՆԻԱ

Կ. Պոլսից հեռագրում են, որ Սուլթան, Թուրք կառավարութեան կարգադրութեամբ քաղաքական արտակարգ դատի են ենթարկուած 19 բուլղար։ Կառավարութիւնը մեղադրում է նրանց այն բանում, որ նրանք փորձել են ապստամբեցնել Սոլունի, Կասսովոյի և Մոնաստիրի բուլղար բնակչութիւնը գոյութիւն ունեցող կառավարութեան դէմ, Մակեդոնիայի համար անկախութիւն ստանալու դիտաւորութեամբ։ Թրքական քրէական օրինագրքի 56 րդ յօդուածի հիման վրայ դատախազը մահուան պատիժ է պահանջում դր. Սամարչևի, քահանայ Ստամատովի, ուսուցիչներ Մաաովի և Պալաչևի, տեսուչ Տոշևի և դպրոցական աշակերտ Իվրովի համար, իսկ մնացածների համար աքսոր է պահանջում։

ՉԻՆԱՍՏԱՆ

Թեանձինում մի հողաբաժնի վերաբերմամբ Ռուսիայի և Անգլիայի միջև ծագած վէճը, որն սպառնում էր լուրջ բարդութիւններ առաջ բերելու յիշեալ երկու պետութիւնների միջև, այժմ, ինչպէս երևում է հեռագրներից, վերջացած կարելի է համարել։ Այդ վէճի ծագումը հետևեալ կերպով է հաղորդում «Ռէյտերի գործակալութիւնը»։ Անգլիական երկաթուղային ընկերութիւնն յիշեալ հողաբաժնի տէր էր հրատարակել իրեն այն հիման վրայ, թէ այդ գետինը մի քանի տարուց ի վեր գտնւում է իր հողերի սահմանում, մինչդեռ ռուսները յայտարարեցին, որ այդ գետինն իրենց է պատկանում, որովհետև կազմում է իրենց նոր կոնցեսսիայի մի մասը։ Երկաթուղին անցկացնելու համար գլխաւոր ինժեներ Կինդերի սկսած աշխատանքները ռուսները դադարեցնել տուին։ Կինդերը դիմեց գնդապետ Մակդոնալդին, իսկ վերջինս իր կողմից գործը հաղորդեց Պեկին՝ անգլիական զօրքերի շտաբի կառավարչին։ Ճաարի կառավարչից ստացուեց հետևեալ պատասխանը. «Շարունակեցէք աշխատանքները, եթէ հարկը պահանջի նոյն իսկ զինուորական ոյժի օգնութեամբ»։ Այս պատճառով անգլիացիներն երկաթուղու գծի երկարութեամբ պահապան զինուորներ կանգնեցրին և շարունակեցին աշխատանքները։ Գեներալ Վոգակ բողոք յայտնեց Ռուսիայի կողմից և ասաց, թէ բրիտանացիներն այդպէս չէին գործիլ, եթէ ռուսները նոյնքան զօրք ունենային Թեանձինում, որքան անգլիացիներն ունին։ Նա աւելացրեց, որ այդպիսի խնդիրները պէտք է ներկայացնուին դիւանագիտութեանը։ Մակդոնալդը նորից հրահանգներ խնդրեց Պեկինից և նորից հետևեալ պատասխանն ստացաւ. «Շարունակեցէք աշխատանքները»։ Գեներալ Վոգակը գայրացաւ և դիմեց Պեկինի ռուսաց դեսպան Գիրսին։ Այստեղ վերջանում է «Ռէյտերի գործակալութեան» հաղորդածը, որը լրացնում են տուրև հրատարակուած հեռագրական լուրերը։

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.-Լոյս մարտի 9 ի գիշերը, Սամարայից եկած տիտուլեար խորհրդականի որդի Նիկոլայ Կոնստանդինովիչ Լագովսկի, որը վիճակագրի պաշտօնով ծառայում է Սամարայի նահանգական զեմստվային վարչութեան մէջ, մօտենալով ս. սինոդի աւագ պրոկուրոր՝ Լիտէյնի պրոսպեկտում գտնուող տան ներքին յարկի առանձնասենեակի լուսաւորուած լուսամուտներին, որտեղ այդ միջոցին պարապում էր իսկական գաղտնի խորհրդական Պաբեդոնոսցևը,—գրպանի կողմը երկու անգամ ատրճանակ պարպեց, յետոյ դարձեալ մի անգամ պարպեց շվէյցարի սենեակի լուսամուտի վրայ, իսկ չորրորդ անգամ պարպելիս գնդակը դուրս չընկաւ։ Բարեբաղդաբար, չարագործի արձակած գնդակները դիպան առաստաղին։ Քննութիւնը կատարում է առանձին կարևոր գործերի դատական քննիչ Կուզմին, Պետերբուրգի դատական պալատի պրոկուրոր Մարսիմովիչի վերահսկողութեամբ։

ԼՈՆԴՈՆ.—Լորդերի պալատ։ Սպենսերը հարցնում է Լանսդոունին, թէ նա չի կարող արդեօք որևէ բան հաղորդել Թեանձինում եղած վէճի մասին։ «Ուրախութեամբ կարող եմ հաղորդել,—պատասխանեց Լանսդոունը,—որ այսօր առաւօտեան Պետերբուրգի անգլիական դեսպանից իմացանք հետևեալը. գրաֆ Լամզդորֆը նրան խնդրել էր անյապաղ առաջարկելու անգլիական կառավարութեանը, որ սեպհականութեան իրաւունքին վերաբերեալ բոլոր խնդիրները թողնուեն երկու կառավարութիւնների քննութեանը, և, հնարաւոր ընդհարումների առաջն առնելու համար, մենք առայժմ միաժամանակ հրամայենք զօրքերին հեռանալ վիճելի տեղերից։ Գրաֆ Լամզդորֆն աւելացրել է, որ ռուսաց զինուորական մինիստրը հեռագրով մանրամասն հրահանգներ է ուղարկել այդ իմաստով, եթէ անգլիական կառավարութիւնը կընդունի առաջարկը։ Ի վերջոյ մինիստրը ցանկութիւն է յայտնել խուսափելու ամեն բանից, ինչ որ առիթ կարող է տալ տարաձայնութիւններին։ (Հաւանութիւններ)։ Մենք իսկոյն և եթ հեռագրով կատարեալ համաձայնութիւն յայտնեցինք գրաֆ Լամզդորֆի հայեացքներին, մանաւանդ որ այդ հայեացքները կատարելապէս համապատասխանում են մեր կողմից արդէն յայտնուած հայեացքներին։ Մենք կարգադրեցինք մեր զինուորական իշխանութիւններին, որ զօրքերը հեռացնեն և դրանով ընդհարումների ամեն հնարաւորութեան առաջն առնեն։ Ինչ վերաբերում է մանրամասնութիւններին, ես յոյս ունիմ, որ իմ հաղորդած գրագրութիւնից պալատը կըտեսնի, որ տարաձայնութիւնը յիրաւի լուծուած է և դա իսկապէս վերաբերում էր զուտ տեղական նշանակութիւն ունեցող մի փոքր գործի, որի պատճառով երկու երկրների յարաբերութիւնները չպէտք է վնասուեն»։ (Հաւանութիւններ)։

ԹԵԱՆՁԻՆ.—Դրութիւնը երկու կողմից էլ մնում է անփոփոխ, երկուսն էլ զսպում են իրենց որևէ թշնամական գործողութիւն չկատարելու համար։ Այստեղ բրիտանացիների տրամադրութեան տակ գտնուած սպիտակ զօրքերի թիւը հասնում է մօտաւորապէս հազարի. ռուսաց զօրքերը փոքրաթիւ են։

ՊԵԿԻՆ.—Այս առաւօտ Թեանձինում վիճելի հողից հեռացրած են երկու վիճող կողմերի զօրքերը։

ԼՈՆԴՈՆ.—Պարլամենտին ներկայացուած են բուրերի հետ ունեցած հաշտութեան բանակցութիւններին վերաբերեալ դոկումենտները։ Դրանցից երևում է, որ բուրերին առաջարկուած, բայց Բոթայի մերժած պայմանները հետևեալներն են եղել. հէնց որ բուրերի բոլոր ոյժերն անձնատուր լինեն, անգլիական կառավարութիւնը ներում կըշնորհի Տրանսվաալի և Օրանժի գաղութներում ամենքին, բայց միայն այն բուրերի վերաբերմամբ, որոնք ծագում են Նաթալից կամ Կապի գաղութից, կըգործադրուեն պատերազմի ժամանակի համար սահմանուած բացառիկ օրէնքները։ Ս. Հեղինէի կղզում և Ցէյլոնում գտնուած գերի բուրերը կուղարկուեն իրենց հայրենիքը։ Ներկայ զինուորական կառավարութեան տեղ կըսահմանուի գաղթային կառավարութիւն։ Այնուհետև բուրերին կըտրուի ինքնավարութիւնն ամենալընդարձակ չափով. եկեղեցական կայքը, զանազան ընկերակցութիւնների սեպհականութիւնները և որբերի դրամագլուխները կըմնան անձեռնմխելի. անգլիական և հոլլանդական լեզուները պիտի գործադրուեն հաւասար իրաւունքներով. անգլիական կառավարութեան վրայ պատասխանատուութիւն չպիտի ընկնի այն պարտքերի համար, որ արել են հասարակապետական կառավարութիւնները, բայց Անգլիան պատրաստ է տալ մի միլիօն ֆունտ ստեռլինգ ծածկելու համար այն վնասները, որոնց վերաբերմամբ բուրերը վարձատրութիւն կըպահանջեն. ագարակատէրերին փոխառութիւն կըտրուի իբրև նպաստ այն կորուստների համար, որ կրել են պատերազմի ժամանակ. պատերազմական տուրք ագարակատէրերը չպէտք է վճարեն. հրացանի կարիք ունեցող բուրգերները թոյլտուութիւն կըստանան իրենց վրայ զէնք կրելու, եթէ թոյլատրող վկայականներ կըխնդրեն և թոյլ կըտան, որ իրենց անունները ցուցակագրուեն. քաֆրերը ձայնի իրաւունք կըստանան սահմանափակ տարածով, եթէ ներկայացուցչական կառավարութիւն սահմանուի. սեւամորթ բնակչութեան դրութիւնը կըկանոնաւորուի օրէնքներով, ինչպէս Կապի գաղութում։

ՀԵԼՍԻՆԳՖՈՐՍ.—Մարտի 13-ին Ռատհաուզի դատարանում նշանակուած է Հելսինգֆորսում փետրուարի 5-ին տեղի ունեցած ցոյցերի գործի քննութիւնը։ Մեղադրւում են վաճառական Հեյլմ, գրող Վերներ Լենքեկ, ինժեներ Ասպ, ճարտարապետ Սանկ Անդերսին, կապիտան Բրօդէ և փիլիսոփայութեան մագիստրոս Մալմբերգ։ Կանչւում են 12 վկայ։

ԿԱԳՃՏԱԴ.—Հաղորդում են, որ Դենտը Սենեկալի մօտ գետնից հանել է երկու թնդանօթ, որոնք երբեմն պատկանում էին Պրինսլոյին։

ՈՒԱՇԻՆԳՏՈՆ.—կարծւում է, որ Չինաստանը չի կարող վճարել 200 միլիօն դոլլարից աւելի։ Ամերիկան բաւականանում է 25 միլիօնով և պատրաստ է աւելի ևս քչացնել իր պահանջները, եթէ միւս պետութիւնները համաձայնեն նոյնպէս քչացնել իրենց պահանջները։ Ամերիկան մինչև անգամ համաձայն է, որ պահանջուի ընդամենը հարիւր միլիօն, բայց իրեն պարտաւոր է համարում պաշտպանել իր հայրենակիցների և նոյն իսկ պետութեան հասանելիք վար-

ձատութիւնը միւս պետութիւնների պահանջած գումարին համապատասխան։

ԼՈՆԴՈՆ.—Պատգամաւորների ժողով։ Չեմբերլէնը յայտարարում է, որ ոչ մի առանձին առարկութիւն չի եղել Կիտչների առաջարկած պայմանների դէմ։ Բոթան իր կողմից առաջարկներ չի արել։ Մասնաւոր հեռագրի մէջ Կիտչեները հաղորդում է, որ Բոթան շատ խիստ է եղել խօսելիս Միլների հետ։

ՊԵԿԻՆ.—Գերմանական, ֆրանսիական և ճափոնական դեսպանները ժողով գումարեցին Չինաստանի նիւթական միջոց, ները քննելու և ձևեր մշակելու, պատերազմական ծախքերն ստանալու և մասնաւոր անձերի պահանջներին գոհացում տալու համար։

ՇԱՆՔՀԱՅ.—Գեզլի գեներալը ժամանեց այստեղ։ Այն լուրը, թէ ճափոնական նաւատորմիղը կեդրոնանում է և թէ ռուսական նաւատորմիղը հաւաքւում է Քոբէյի մօտ, չի հաստատւում։

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

Պետերբուրգ, 9 մարտի

Վեքսէլի կուրսը երեք ամսով

Լոնդոնի վրայ 10 ֆունտ ստեր. համար	93,65	
Բերլինի վրայ 100 մարկի համար.	45,82½	
Պարիզի ,, 100 ֆրանկի ,,	37,30	
Վեքսէլի կուրսը չէքերով.		
Լոնդոնի վրայ	94,60	
Բերլինի ,,	46,30	
Պարիզի ,,	37,57½	
Բորսային դիսկոնտը	5½—7½%	
4% պետական ռենտ.	96	առկ.
4% ներքին 2, 3, 4 փոխառ.		
1891 թ.	—	
4½% ներքին 2, 3, 4 փոխառ.		
1893 թ.	100⅝%	ծախ.
4½ ազն. կալ. բանկի գրաւաթղ.	96	առկ.
5% առաջին ներքին խաղարկ. փոխառութ. 1864 թ.	344	առկ.
5% երկրորդ ներքին խաղարկ. փոխառութ. 1866 թ.	288	առկ.
5% ազն. կալ. բանկի խաղարկ. գրաւաթղթերը.	221	առկ.
3½% պետ. ազն. կալ. բանկի գրաւթ.	89⅛	գն.
5% ոսկու ռենտը 1884 թ.	—	
Թիֆլիսի քաղ. վարկի ընկ.	93½	
Օբլիգացիաները	93	ծախ.
Թիֆլիսի կալ. բանկի 5% գրաւ.	93	ծախ.
Քութայիսի ,, ,, 6% ,,	—	ծախ.
,, ,, ,, 5% ,,	93	գն.

Բորսայի տրամադրութիւնը խիստ ամուր ։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

[Ժամերը նշանակւում են Պետերբուրգի ժամանակը, փակագծերի մէջ—Թիֆլիսի ժամանակը)

Արագընթաց գնացքը № 2 Թիֆլիսից Բագու մեկնում է (շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը) 7 ժ. 56 ր. (8 ժ. 54 ր.) առ., հասնում է Բագու 9 ժ. (9 ժ. 58 ր.) երեկոյեան։

Արագընթաց գնացքը № 1 Բագուից Թիֆլիս մեկնում է 6 ժ. 50 ր. (7 ժ. 48 ր.) առ., Թիֆլիս հասնում է 8 ժ. 12 ր. (9 ժ. 10 ր.) երեկոյեան։

Պօստային գնացքը № 3 Բագուից Թիֆլիս մեկնում է 11 ժ. 15 ր. 12 ժ. 13 ր.) երեկոյեան, Թիֆլիս հասնում է 5 ժ. 35 ր. (6 ժ. 33 ր.) ցերեկուայ. Թիֆլիսից Բաթում մեկնում է 6 ժ. 30 ր. (7 ժ. 28 ր.) երեկոյեան, Բաթում հասնում է 7 ժ. 10 ր. (8 ժ. 08 ր.) առ.։

Մարդատար գնացքը № 5 Բագուից Թիֆլիս մեկնում է 3 ժ. 5 ր. (4 ժ. 3 ր.) ցերեկուայ, Թիֆլիս հասնում է 8 ժ. 23 ր. (9 ժ. 21 ր.) առ., Թիֆլիսից Բաթում մեկնում է 9 ժ. 3 ր. (10 ժ. 1 ր.) առ., Բաթում հասնում է 9 ժ. 11 ր. (10 ժ. 9 ր.) երեկոյեան։

Մարդատար գնացքը № 6 Բաթումից Թիֆլիս մեկնում է 8 ժ. 56 ր. (9 ժ. 54 ր.) առ., Թիֆլիս հասնում է 8 ժ. 42 ր. (9 ժ. 40 ր.) երեկոյեան։ Թիֆլիսից Բագու մեկնում է 9 ժ. 22 ր. (10 ժ. 20 ր.) երեկոյեան, Բագու հասնում է 1 ժ. 25 ր. (2 ժ. 23 ր.) ցերեկուայ։

Պօստային գնացքը № 4 Բաթումից Թիֆլիս մեկնում է 10 ժ. 4) ր. (11 ժ. 45 ր.) երեկոյեան, Թիֆլիս հասնում է 11 ժ. 18 ր. (12 ժ. 16 ր.) առ., Թիֆլիսից Բագու մեկնում է 12 ժ. 36 ր. (1 ժ. 34 ր.) ցերեկուայ, Բագու հասնում է 7 ժ. (7 ժ. 58 ր.) առ.։

Թիֆլիսից Կարս մեկնում է 10 ժ. (10 ժ. 58 ր.) երեկոյեան, հասնում է Ղարաքիլիսա—5 ժ. 4 ր. (6 ժ. 2 ր.) առ., Ալէքսանդրապօլ—8 ժ. 27 ր. (9 ժ. 25 ր.) առ., Կարս—12 ժ. 23 ր. (1 ժ. 21 ր.) ցերեկուայ։

Կարսից մեկնում է 4 ժ. 12 ր. 6 ժ. 10 ր.) ցերեկուայ, հասնում է Ալէքսանդրապօլ—7 ժ. 40 ր. (8 ժ. 38 ր.) երեկոյեան, Ղարաքիլիսա—11 ժ. (11 ժ. 58 ր.) գիշերուայ, Թիֆլիս—5 ժ. 15 ր. (7 ժ. 13 ր.)։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐՏԻՍՏԻԿ. ԸՆԿ. ԹԱՏՐՈՆՈՒՄ

Երեքշաբթի, մարտի 13-ին

Բագուի հայ դրամատիկ. դերասանական ընկերութիւնն ի նպաստ

—Պ. ԱՐԱՔՍԵԱՆԻ ԵՒ Ա. ՎՐՈՅՐԻ—

Կըներկայացնէ առաջին անգամ Սերվանտէսի հռչակաւոր երկը

ԴՈՆ ՔԻՇՈՏ

ԼԱՄԱՆՇԵՑԻ

5 գործ., փոխադր. Սարգսի, թարգմ. Արաքսեանի։

Դոն Քիշոտի դերը կըկատարէ Ա. Վրոյր. Սանխո Պանչոյի դերը կըկատարէ Պ. Արաքսեան.

Այս պիէսի համար պատրաստուած են նոր դեկորացիաներ, ակսեսուար եւ հագուստ։

Տեղերի գինը սովորականն է։ Տոմսակները ծախւում են միմիայն կասսայում։ Սկիզբն երեկոյեան ժամը ճիշտ 8 ին։

(567) 3 3

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Երեքշաբթի, մարտի 13-ին

պ. պ. անդամների, կանդիդատների և նրանց ընտանիքների համար կըտրուի

Ա. Ա. ՎԵՐԻԳՈ-ԴԱՐՕՎՍԿՈՒ

և ստմնամբուլ-գուշակ

ՏԻԿ. ՕԹԱԼԻԱ ԲԷԱԹԱՅԻ

ՖԻԶԻԿՈ-ԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Սկիզբը ժամը 8½-ին երեկոյեան։ Տեղերի գները՝ 1 ր. 50 կոպէկից մինչև 30 կ.։ Տոմսակները վաճառւում են ժողովարանի շվէյցարի մօտ։

(572) 2—2

Լոյս տեսաւ

Դր. Վ. ՔՈՍՏՄԵԱՆՑԻ և Ս. ՔՈՓՇԵԱՆԻ

«DIE SOZIAL-ÖKONOMISCHE TÜRKEI»

աշխատութիւնը

ԳԻՆԸ 2 ՄԱՐԿ

Դիմել՝—Berlin, VerlagshandlungR. Prager NW. 7. 5—2

ՎԱՃԱՌՒՈՒՄ Է

(Վեննայում տպուած)

«ՋԷՅԹՈՒՆԻ ԱՆՑԵԱԼՆ ԵՒ ՆԵՐԿԱՅԸՆ»

ԳԻՐՔԸ

Կիլիկիայի քարտէզով, Զէյթունի յատակագծով, Զէյթունի տեսարանով և զէյթունցի կռւի պատկերով։

Գինն է ճանապարհածախսով 1 ր. 75 կ։

Դիմել՝—Тифлисъ, Галусту Галустьяну, Лорисмеликовская № 11.

(566) 5—2

ԱՐՇԱԿ ԼԱԶԵՒՈՒՆԻ

Զուտով լոյս կըտեսնի

ԴԻՊԻ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Պատմական և տեղեկագրական նկարագրութիւններ

ԳԻՆԸ 1 ՌՈՒԲԼԻ

Դիմել՝ Шуша, Аршаку Кайцуни

(570) 3—2

Զուտով կըլանձնուին տպագրութեան

I

ՔՆԱԾ ԱՌՒԾԻ ՊԱԼԱՏՈՒՄ

ԶՐՈՅՑ

II

ՆՇՄԱՐՆԵՐ

Առաջին պրակ

Բովանդակութիւն՝ Զուլու հայոց կոնսիստորիան, Աշտա վարդապետ և Գանձակեցեան, Բեսարաբիոյ Նոր Նախիջևանի և Ղրիմի հայերը, քահանաները և եկեղեցիները։

(571) 3—2

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Խնդրում եմ ուղարկել ինձ այն երգերը, որոնք տակաւին չեն տպագրուած։

Հասցէս Протоiерею Григорiю Григорiанцъ, въ БАКУ. (573) 3—1

ՀԱՐԿԱՒՈՐ Է

ՑՐԻՉ

Պայմանների ծանօթանալու համար դիմել «Նոր-Դար»-ի վարչութեան։

ՄԱԶԵՐՍ ԱՃԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ես գործ եմ ածում

Դեղագործ ԿԻՆՈՒՆԵՆԻ ԷԼԷՕՊԱՏԸ

որն ապացուցանում է՝ իր անհերքելի ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ ՄԱԶԵՐԻ ՀԱՄԱՐ

Ռուսաստանում է, որպէս մի դեղ, որ նպաստում է մազերի արագ աճմանը և ոչնչացնում է գլխի թեփը։

1 սրուակի գինը՝ 1 ր. 50 կ., 2 սրուակը ներապական Ռուսիա է ուղարկւում 4 ր.։ Գլխաւոր պահեստը՝ С.-Петербургъ, Разъѣзжая, 13. Նամակների հասցէն՝ Складъ Элеопата, пр. Кинуненъ.

(М.)№ 3592 5—2

ГОРЬКАЯ ВОДА
САКСЛЕНЕРА
ИСТОЧНИКА
„ГУНЯДИ ЯНОСЪ“

СЛАБИТЕЛЬНАЯ ВОДА
ДѢЙСТВУЕТЪ ЛЕГКО и ВѢРНО.
ПРЕИМУЩЕСТВА:
МЯГКІЙ НЕ ПРОТИВНЫЙ ВКУСЪ,
МАЛАЯ ДОЗА.
ВО ИЗБѢЖАНІЕ ПОДДѢЛОКЪ ПРОСИМЪ
ОБРАЩАТЬ ВНИМАНІЕ
на изображенную здѣсь
МАРКУ ПОРТРЕТЪ
которая неизмѣнно находит. на этикетѣ
каждой бутылки настоящ. нашей воды

ПРЕДПИСЫВАЕТСЯ ВРАЧЕБНЫМИ АВТОРИТЕТАМИ ВЪ ТѢХЪ СЛУЧАЯХЪ, КОГДА ТРЕБУЕТСЯ УПОТРЕБЛЕНІЕ ЛЕГКАГО НО ВѢРН. СЛАБИТЕЛЬНАГО.
ДЛЯ НОРМАЛЬНАГО ПРІЕМА ДОСТАТОЧНО ½ ОБЫКНОВЕННАГО СТАКАНА.
МНОГО МИЛЛІОНОВЪ
БУТЫЛОКЪ ЕЖЕГОДН. СБЫТА.
ЯСНО ДОКАЗЫВАЮТЪ БЕЗВРЕДНОСТЬ СЛАБИТЕЛЬНОЙ ВОДЫ ЭТОГО НАТУРАЛЬНАГО МИНЕРАЛЬН. ИСТОЧНИКА.
Продается у всѣхъ дрогистовъ и аптекарей.

(М.) № 202933 12—4

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

այսու յայտարարում է, որ իր առեւանում մարտի 13-ին, օրուայ ժամը 1-ին աճրդով տրւում է ջրամբարի շինութիւնը Պանասփողոցի վրայ արդէն գոյութիւն ունեցող ջրամբարից մինչև Բաշինջաղեանի տունը, որը գտնւում է Թիֆլիս քաղաքի 8-րդ բաժնում Գոնչարեան փողոցում մօտ 115 սաժ. երկարութեամբ 2665 ռուբլով։

Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են պայմանների հետ ծանօթանալ բոլոր լի օրերին առաւօտեան ժամը 9 ից մինչև ցերեկուայ ժամը 3-ը։

(569) 3—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Թիֆլիս քաղաքի կառավարութեան և բնակիչը սայլորդութեան վերաբերեալ պարտադիր որոշումների §13-ի հիման վրայ յայտարարում է թեթև մարդատար և բեռնակիր կառքեր ու սայլեր պահողներին, որ այդ երկու դասակարգերի աւագների և նրանց անձնափոխանորդների ընտրութիւններ են նշանակուած քաղաքային վարչութեան շէնքի մէջ մարդատար կառքեր պահողների համար՝ մարտի 15-ին, հինգշաբթի, օրուայ ժամը 3 ին, և բեռնակիր սայլեր պահողների համար՝ մարտի 18-ին, կիրակի, առ. ժամը 10-ին։ Ուստի խնդրում է կառքեր և սայլեր պահողներին, որ ամենքը շընորհ բերեն քաղաքային վարչութիւն նշանակուած ժամանակին իրենց հետ ունենալով իրենց թուահամարները կամ թէ կառապանութեան և սայլորդութեան արհեստին վերաբերեալ պարտադիր կանոնների կըրոյկը, ընտրութիւնները կատարելու համար։

(№ 573) 3—1

Лучшія аттестаціи отъ учебнаго начальства.

За успѣшнія занятія благодарности

И. Я. БРОНЪ-ФОНЪ-БРЕННЕРЪ

преподаетъ

Полный курсъ БУХГАЛТЕРІИ

ПРЕДМЕТЫ ЗАНЯТІЙ:

1) Бухгалтерія (двойная италіянская), 2) Коммерческая ариѳметика 3) Коммерческая экономія. 4) Ариѳметика на счетахъ, 4) Торговыя и вексельныя узаконенія и 5) Коммерческая корреспонденція.

Курсъ 3-хъ-мѣсячный. Занятія ежедневныя. Плата за курсъ 60 руб. Ручательство и гарантія за успѣхи. Болѣе 1000 окончившихъ курсъ. Михайловская № 71.

Собственный методъ преподаванія по собственнымъ сочиненіямъ, продающимся во всѣхъ книжныхъ магазинахъ.

Занятія съ 1-го числа

Преподов. ведется по совѣтъ. сочиненіямъ

480) Годъ занятій одинадцатый 100—28

(М.)№1 27

Մանազէտների ցուցմունքների համաձայն՝ նոր կրեմ

ԿՐԵՄ ԱՄԻԿՈՍ

CRÊME AMYKOS

Դէմքին տալիս է և երկար ժամանակ պահպանում թարմ ու առողջ գոյն, ոչնչացնում է դէմքի խալերը, բծերը, արևահարումը և կարմրութիւնը. անհրաժեշտ է դէմքի գեղեցկութիւնը պահպանելու համար։

Սրուակի գինն է 1 ր. 25 կ.։ Երկու սրուակը ներսով. Ռուսիա ուղարկւում է 3 ր. 50 կ. վճարով։

Ստանալ կարելի է Ռուսիայի բոլոր դեղատներում և կոսմ. խանութներում։ Մեծ քանակութեամբ վաճառւում է հնարողների մօտ՝ Торговый Домъ «Парфюмерная лабораторія І. ГОЛЛЕНДЕРЪ», С.-Петербургъ, Разъѣзжая, 13.

(М.) № 9523 5—2

ՏՊԱԳՐՒՈՒՄ Է

ԲԱԳՐԱՏ ԱՅՎԱԶԵԱՆՑԻ

ՀԻՍՍԻՍԻ ԱՐԾԻՒԸ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ։ Հաւաշանքի և տանջանքի աշխարհը։ Փախստականները։ Ասլան։ Սրտի մէջ կայծեր։ Ներսէս սրբազանը։ Վիշտ։ Վշտի արձագանքը։ Կենդանի ընծան։ Հայ ընտանիք։ Դաւ։ Խաչեցէք նրան։ Կրակի միջից։ Կռիւ։ Փախուստ։ Խաչ և սուր։ Զինի մէջ։ Գնչուհի։ Բանակում։ Պարսիկների բանակում։ Անուրջ։ Կեանքից էլ թանկ։ Ոսոխներն էջմիածնում։ Էջմիածնի պաշարումը։ Աշտարակի պատերազմը։ Օշականի ճակատամարտը։ Վրէժ։ Նահատակներ։ Արիւնոտ դաշտ։ Պատմական անցքերից։ Տիֆլիս։ Գաղանութիւն։ Թնդանօթի բերանում։ Երևանի առումը։ Արտասուքների պսակը։ Հիւսիսի Արծիւը։

Գինն է մինչև լոյս տեսնելը ՄԷԿ ՌՈՒԲԼԻ Դիմել՝ Тифлисъ, Дворянская улица № 6 Баграту Айвазянцу.

(564) 3—3